Բ. Ա. ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1976, 454 էջ։

Հայաստանի տարբեր մասերին ու «աշխարհներին» պատմության ընթացքում, մանավանդ ֆեոդալիզմի դարաշրջանում, տարբեր ճակատագիր է վիճակվել։ Դրանցից յուրաքանչյուրն ունեցել է իր քաղաքական պատմության, տնտեսական-մշակութային և, նույնիսկ, հասարակական-սոցիալական կյանքի առանձնահատկությունները։ Ուստի անվիճելի է, որ հայ ժողովրդի ֆեոդալական ժամանակաշրջանի ընդհանուր պատմությունն անհնար է պատկերացնել առանց Հայաստանի տարբեր մասերի ու «աշխարհների» անցած ուղու լուսաբանման։ Հայագիտության համար կարևոր նշանակություն ունեցող այդպիսի պրոբլեմներից մեկի ուսումնասիրությանն է վիրված Բ. Ուլուբաբյանի գրախոսվող մենագրությունը, որն արդյունք է նրա տարիների եռեմնավոր ու տքնաջան աշխատանքի։

Հեղինակի ուսումնասիրության առարկան Արցախ «աշխարհի» (ավելի ուշ՝ Ղարաբաղ) կազմի մեջ մտնող Խաչենն է, նրա ավելի քան վեց հարյուր տարվա պատմության բազմաթիվ ու բազմաբովանդակ հարցերը։ Բ. Ուլուբաբյանը Խաչենի իշխանության պատմության ուսումնասիրության բնագավառի պիոներներից է, եթե որոշ չափով բացառելու լինենք Մ. Բարխուդարյանցին, որի աշխատությունները վերաբերում են ոչ թե հատուկ Խաչենի իշխանությանը, այլ ամբողջ Աղվանից աշխարհին և Արցախին։ Պետք է նաև նկատի ունենալ, որ Մ. Բարխուդարյանցի աշխատությունների երևան գալուց անցել է 70—75 տարի և այդ ժամանակընթացքում հայագիտությունը հսկայական առաջընթաց է կատարել. հրապարակվել են մի շարք սկզբնաղբյուրներ, որոնք չեն օգտագործվել նախորդ հետազոտողների կողմից։

Արցախում և նրա բաղկացուցիչ մասը կազմող Խաչենում հայկական քաղաքական կյանքը երբեք չի դադարել։ Նրա հինավուրց բնիկ նախարարական-իշխանական տունը հսկայական դեր է խաղացել հայ ժողովրդի ընդհանուր պատմության մեջ, դարեր շարունակ պահպանել իր ինքնուրույնությունը, երբեմն կիսանկախ վիճակը նույնիսկ այնպիսի ժամանակներում, երբ վերացված էին հայկական մյուս վարչա-քաղաքական կազմավորումները՝ թագավորությունների ու իշխանությունների մեծագույն մասը։ Ուստի, միանգամայն հասկանալի է, թե ինչու հենց այստեղ ու հարևան Սյունաց աշխարհում XVII—XVIII դդ. իրենց մարմնացումն ստացան ազգային-ազատագրական հուժկու շարժումները։

Քաղաքական համեմատաբար նպաստավոր պայմանները Խաչենի իշխանության մեջ պարարտ հող էին ստեղծել ազգային մշակույթի լավագույն ավանդույթների հարատևման և զարգացման համար, ծնունդ տվել փառավոր մատյանների, ճարտարապետական հրաշալի կոթողների և կրթական կենտրոնների։ Այս առումով է, որ Խաչենի իշխանության X—XVI դդ. պատմության բոլոր ծալքերի քննական լուսաբանումը մեծ կարևորություն է ներկայացնում։ Բ. Ուլուբաբյանի մենագրությունը խորը գիտական, հետաքրքիր ու հաջողված փորձ է մեր պատմագրության այդ բացը լրացնելու ճանապարհին։

Աշխատության ամենակարևոր արժանիքներից մեկը փաստական հարուստ հենքն է։ Այն գրված է բազմաթիվ ու բազմազան սկզբնաղբյուրների (հայ և օտար պատմիչների երկեր, ձեռագրերի հիշատակարաններ, ժամանակագրություններ, վիմական արձանագրություններ, նյութական մշակույթի մնացորդներ և այլն) տեղեկությունների մանրակրկիտ քննության հիման վրա։ Այս կամ այն եզրակացությանը հանգելուց առաջ հեղինակը համեմատում, ճշտում է տարբեր աղբյուրների տեղեկությունները, գտնում ամենաստույգները և դրանք վերլուծում մեծ բարեխղճությամբ։ Դրա շնորհիվ նրա բոլոր եզրահանգումները փաստարկված են ու համոզիչ։ Հեղինակի օգտագործած սկզբնաղբյուրների տեղեկությունների մի մասը (հիշատակարաններ, հանապարհորդական նոթեր, վիմագրություններ և այլն) առաջին անգամ են գիտական շրջանառության մեջ դրվում։ Նրան հաջողվել է ճշգրտել մինչև հիմա հայտնի մի շարք վիմագիր արձանագրությունների ընթերցումը, քննության առարկա դարձնել հայագիտության կողմից առ այսօր չնկատված փաստեր ու իրողություններ։ Բ. Ուլուբաբյանի աչքից չեն վրիպել ոչ մի-

«մանրուքա» ու իրողություն, որ կարող են այս կամ այն չափով պարզություն մտցնել քննվող հարցերի մեջ։

Խաչենի իշխանության էթնիկական ու վարչա-քաղաքական ակունքների որոշումը, նրա իշխանական տան տոհմաբանությունը կարևոր նշանակություն ունեն հայոց պատմության մեջ վերջինիս խաղացած դերը ճիշտ գնահատելու, ինչպես և մի քանի անգամ իրար հաջորդող նրա վերելքի ու վայրէջքի պատճառները ճիշտ ըմբռնելու համար։ Նշելով ու ըստ արժանվույն գնահատելով այս հարցի մասին նախորդ ուսումնասիրողների՝ Բարխուդարյանցի և Ս. Ջալալյանի թողած արժեքավոր ժառանգությունը, Բ. Ուլուբաբյանը հավաստի սկզբնաղբյուրների վկայակոչումով ուրվագծում է Մեծ Հայքի միասնական պետության ժամանակներից սկիզբ առած այդ իշխանական տան տոհմաշղթան և մատնանշում է այն անունները, որոնք առնչություն չունեն այդ տոհմի հետ, սակայն թյուրիմացաբար մտել են որոշ պատմիչների երկերի, իսկ այնտեղից էլ՝ առանձին ուսումնասիրողների աշխատությունների մեջ։ Նա համոզիչ կերպով ճշտում է Երկրամասի Առանշահիկ իշխանական տան նշանավոր ներկայացուցիչների՝ Սահլ Սմբատյանի, Խայի Արու-Մուսեի, Գրիգոր-Համամի, Հասան-Ջալալի և ուրիշների ծագմանը, նրանց գործունեությանը, տիրույթների սահմաններին ու ժառանգներին, տոհմի տարբեր ճյուղավորումներին վերաբերող մի ամբողջ շարք հարցեր ու հարակից խնդիրներ։ Աշխատության մեջ ցույց է տրված, որ հնագույն այդ իշխանական տոհմը գոյատևել ու անընդմեջ իշխել է քննության առարկա, ինչպես և նախորդ և հետագա դարերում՝ մինչև XIX դ. սկիզբը՝ «հանդիսանալով ամենաերկարատևյաց նախարարական (իշխանական) տունը հայ հողի վրա»։

Բ. Ուլուբաբյանը նշում է, որ արաբական տիրապետությունից հետո Բագրատունյաց թագավորությունը, որի սահմանների մեջ ընդգրկված էր նաև Խաչենի իշխանությունը, քաղաքական ու մշակութային վերելքի լայն հեռանկար կարող էր բացել հայ ժողովրդի համար։ Սակայն Խաչենում և հարևան հայկական շրջաններում այդ հեռանկարները չիրականացան։ Աշոտ Բագրատունու հաջորդներին չհաջողվեց ստեղծված թագավորությունը դարձնել միաձույլ, հզորացնել և անմատչելի դարձնել արտաքին արհավիրքների դեմ։ Այդ ուղղությամբ Բագրատունի թագավորների գործադրած գերմարդկային ուժերը վերջիվերջո արդյունքի չհասան։ Բագրատունյաց արդեն տրոհվող պետության պայմաններում՝ ավատական կարգերին հատուկ կենտրոնախույս տրամադրություններին հետևանքով, Խաչենը թողնվել էր իր բախտին և ավելի մանրանալուփոքրանալու միտումներ էր ցույց տալիս։ 910 թ. այստեղ Հովհաննես-Սենեքերիմը ստեղծեց Փառիսոսի թագավորությունը, որի պատմության հիմնական առանձնահատկությունները առաջին անգամ ուրվագծված են գրախոսվող մենագրության մեջ։ Այնտեղ առաջին անգամ ի մի են բերված աղբյուրների տեղեկությունները Փառիսոսի թագավորության մասին, քննված են այդ թագավորության կազմավորման, իշխող թագավորական հարստության ծագումնաբանության, նրա անկման ժամանակի ու պատճառների վերաբերյալ եղած կարծիքները՝ հիմք ընդունելով հայ և օտար աղբյուրների վկայություններն ու հաղորդած տեղեկությունները։

Հեղինակն իր ուսումնասիրության բուն խնդրին անդրադառնալիս քանիցս հիշեցնում է, որ իր հետազոտության հիմնական նյութը Խաչենի իշխանության քաղաքական պատմությունն է։ Այնուհանդերձ, դա չի խանգարել, որ աշխատության մեջ հետաքրքիր տեղեկություններ հաղորդվեն ու քննվեն նաև Խաչենի իշխանության բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի և մշակութային կյանքի վերաբերյալ։ Այս տեսակետից ուշադրության արժանի են Խաչենի գյուղացիության ճորտական իրավունքին վերաբերող վիմագիր արձանագրությունների քննությունը Երկրամասի սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերող գլխում և Հասան-Ջալալյանների մշակութային գործունեության վերհանումը, հատկապես բնութագրումն այն դերի, որ ունի Գանձասարի ճարտարապետական համալիրն ու մշակույթի նշանավոր կենտրոնը հայ միջնադարյան մշակութային կյանքի զարգացման մեջ։

Մենագրության այս հատվածի գիտական նշանակությունը բարձրանում է նաև նրանով, որ առ այսօր Գանձասարը դեռևս քիչ է ուսումնասիրված։ Մինչդեռ հայտնի է, որ մշակույթի կենտրոն լինելու հետ միասին Գանձասարը խոշոր դեր է խաղացել նաև XVIII դ. հայ ազատագրական շարժման մեջ և նրա համակողմանի ուսումնասիրությունը մեծ կարևորություն ունի։

Սակայն, ինչպես ասվեց, մենագրության առանցքը Խաչենի քաղաքական կյանքն է։ Հեղինակը համոզիչ փաստերով ցույց է տվել, որ սելջուկ-թուրքերը, մանավանդ թաթար-մոնղոլական և հետագա եկվոր տիրապետողները որքան էլ բռնությամբ ու կեղեքումներով նեղում էին աշխարհիկ իշխանավորներին, հպատակ երկրամասի ներսում հաճախ ճանաչելով միայն հոգևոր առաջնորդների գոյությունն ու իրավունքները, այնուամենայնիվ, Խաչենի հին իշխանական տան մնացորդները կենսունակ էին և մնացել էին իրև իրենց երկրի վարչա-քաղաքական իշ-

խանության տնօրենները։ Հեղինակը իրավացիորեն նկատում է, որ վերջիններս չնայած չունեին զինական անհրաժեշտ կշիռ, բայց և այնպես նրանց ներքին իրավասությանը ենթակա այդ իշխանությունը վառ պահեց հայկական պետականության բեկորները և ազգային ազատագրության այն կայծերը, որոնցով պետք է բորբոքվեին XVIII դ. ազատագրական շարժումները Ղարաբաղում և հարևան Սյունիքում։

Պատմական աղբյուրների և պատմագիտական գրականության բազմաղան նյութերի համադրական քննությամբ, ճիշտ է, Ա. Մնացականյանի կողմից վերջին տարիներս հիմնավորապես պարզված էին Արցախի և նրան հարակից հայկական գավառների պատմա-աշխարհագրական և էթնիկական սահմանները, ինչպես և այդ տարածքների վրա իշխած տոհմերի ազգային պատկանելության հարցը, այնուհանդերձ, Խաչենի իշխանական տան առանձին ներկայացուցիչների անվան, ժամանակի ու գործերի, նրանց տիրույթների սահմանների որոշման ու ճշտման հարցում դեռես կային տարակարծություններ ու թյուրիմացություններ, որոնք բացահայտվել, լուսաբանվել ու համոզիչ պատասխան են գտել Բ. Ուլուբաբյանի մենագրության մեջ։ Գրախոսվող աշխատության մեջ պատմա-աշխարհագրական եզրահանգումները ևս կատարված են հետաքրքիր ու գիտական առումով հիշատակության արժանի բարեխղճությամբ։ Աշխատության զանազան մասերում և մանավանդ պատմա-աշխարհագրական ակնարկում, աղբյուրների քննական-քննադատական ուսումնասիրության հիման վրա, կատարված է լուրջ աշխատանք։ Հեղինակը ցույց է տվել իշխանության տարածքի փոփոխությունները նրա պատմության տարբեր փուլերում, ճշտել է երկրամասի բոլոր գավառների աշխարհագրական դիրքն ու սահմանները, աշխարհագրական օբյեկտների տեղադրությունը։ Առանձնապես հաշող են լուսաբանված Մյուս Հաբանդ (էջ 31), Մեծառանք (էջ 31—32), Մեծկուանք (էջ 32—33), Փառիսոս (էջ 33—34), Բերդաձոր (էջ 35—36) գավառների դիրքն ու սահմանները։

Մենագրությունն ունի կուռ կառուցվածք։ Դրանում արծարծված են երկրամասի պատմությունը համակողմանի ընդգրկող բոլոր մեծ ու փոքր հարցերը։ Բ. Ուլուբաբյանը Խաչենի պատմությունն ուսումնասիրել է բովանդակ Հայաստանի և հարևան «աշխարհների» պատմության ֆոնի վրա՝ մարքսիստական պատմագիտության մեթոդոլոգիայով։ Մենագրության մեջ նկատվող բացթողումները, որոնցից ամենաէականը, մեր կարծիքով, բնակչության սոցիալ-տնտեսական պայմաններին ու մշակույթին համեմատաբար քիչ տեղ հատկացնելն է և քարտեզի բացակայությունը, չեն կարող ազդել նրա ընդհանուր արժեքի վրա, քանի որ դրանք հիմնականում հետևանք են նաև համապատասխան սկզբնաղբյուրների բացակայության։ Բ. Ուլուբաբյանի ուսումնասիրությունը զգալի ներդրում է հայ ժողովրդի միջնադարյան պատմության ուսումնասիրման բնագավառում։ Նրա այնքան մեծ բարեխղճությամբ լուսաբանած Խաչենի քաղաքական պատմությունը, իշխանական տոհմագրությունը, պատմա-աշխարհագրական, բանասիրական, սոցիալ-տնտեսական և մյուս բնագավառներին վերաբերող հարցերը մեծապես նպաստելու են հայ ժողովրդի ընդհանուր ու համակողմանի պատմության ստեղծմանը։

Անուրանալի է նաև գրախոսվող ուսումնասիրության լեզվական բարձր կուլտուրան։ Հեղինակը օժտված լինելով գրական անուրանալի ձիրքով, իր մենագրությունը շարադրել է օրինակելի հայերենով։ Անկախ քննվող հարցերի բնույթից, գրքի բոլոր բաժանմունքներն ընթերցվում են մեծ հաճույքով ու բավականությամբ։ Հրաշալի են նյութի մատուցման ձևերն ու հնարանքները, և չնայած մենագրությունը վերաբերում է պատմագիտական առումով «ենեղ» ու «ակնոռոտ» հարցերի, բնույթով խորը քննախոսություն է, մասնագետներից բացի այն մատչելի է նաև ընթերցող ու պատմությամբ հետաքրքրվող հասարակության շրջաններին։

Բ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր